


ՏԵՐԵՆ ՏՆՈՐԷՆ
Ն. ՓՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է
գրութիւն պէտք է ուղղել առ
Տնօրին. ԱՐՇԱՆՈՅՍ քաղաքի
ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԵՂԻՊՏՈՍԻ ՉԱՄՍՐ
Տարեկան ուղղ. ցանկին. 60
Վեցամսեայ » 35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԷՐ
Տարեկան Ծրանք 20
Վեցամսեայ » 12

E. TOROSSIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHALOUYCH
LE CAIRE (EGYPTE)

Լ Բ Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՄԱՐԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿՍՆԵՆԻԿ
Եւ թղթատարի ծախքը
Խնրագրութեան վրայ է :

Խնրագրութեան ուղղում
գրութիւնք էս չ'են տրուիր

Ա.Զ.Գ.Ա.Ր.ՈՒԹԻՒՆԻՐ
Կանխիկ վճարելի են

ԱԿՆԱՐԿՆԵՐ

« Խուշին քե շառ սսես քե վաս,
Կը կարծե իրան հասկես.
Սեռին շասթն խեռին խըրաս
Մըռին գաղափարն ի՛նչ անկ » :
ՋԻՒԱՆԻ

Գասակարգ մ'ունինք, աւելի երիտա-
սարգեներէն, որուն ո՛վ, կամ ինչ լինելը
տակաւին յայտնի չէ. այդ գասակարգը դժ-
բաղդաբար մետաղ մ'ալ չէ, որ փորձա-
քարին զարնելով հասկնաս անոր սկի կամ
կապար ըլլալու աստիճանը : Ըստ Էրեւոյ-
թին պատկառելի է նա, հաքուած, շքե-
ւած, ամենէն վերջին քուայիքով. շար-
ժաններուն մէջ՝ տիրապետող՝ խօսակցու-
թեան մէջ՝ քնքուշ, քաղաքավարի, կե-
ուածքի մէջ՝ սալօնական, սէզ, յոխորտ,
շատ բանի չի հաւնիր, ու միայն ինքն իրեն
կը հաւնի, իրմէն դուրս իրեն հաւասարող
չկայ. շատ վերէն կը նայի ու տեղեկու-
թիւն անգամ չունի որ իր երկար քթին
տակ ընչացք մ'ունի, և աչքին վրայ՝ յօնք.
Հաւաքածուններէն գեղեցիկ բառեր ու
գարձուածներ ժողոված է ու կը գործածէ
զանոնք ի ժամառ և ի շարժամառ. սալօ-
նական մարդոցմէ անորոշ ձեւեր ու գծեր
ժողոված ու ինամով ընդօրինակած է և կը
գործածէ հեղինակաւորի նրբաճաշակութեան
վերջին կատարելագործութեամբ. իր բա-
լոր ոյժը տուած է արտաքինին, որուն մէջ
անչափ զարգացած է, որ իրեն պէս մի-
մարներու շրջանակէն կը կոչուի « Զարգա-
ցած մարդ է... » անունով : Իր ամբողջ զօ-
րը տուած է ըսինք արտաքինին, մերթին
փայլունութեան, օւլայած շապկին, որմէ 12
հատ ունի մէկ շարժումն համար գործա-
ծելի, փողպատի գոյնին ու վէտովետու-
ներուն՝ որմէ 36 հատ ունի օրական երեքա-
կան փոխելու սկզբունքով. օրական երկու
անգամ շապկը և երեք անգամ ֆրակաքը
կը փոխէ բայց գլուխը մէկ անգամ չի փո-
խեր գուցէ այն պատճառով որ կրնան ի-
րեն փոփոխամիտ յըրջըլել. կը հետեւի
գլխի այս-պիսի կամ այս-առփիսք վար-
տայարդարութեան, մօրուքի՝ այս-պիսի
ժեանքներէն կամ ֆառոնէին, պիտերի
այս-սիւնչիս սլորումին, կուրծքի պորթո-
նիէն ինչ վրայ վարդ մը իր կոկոնը կը բա-
նայ, կամ մեխակ մը իր անոյշ աչքերը տն-
կած կը նայի, որոնք պարտեպի մը մէջ
աւելի գեղանի փթթումի մը պիտի արժա-
նանային գուցէ, բայց այդ սղտոտ սրտին

վրայ հանգչած արմատախիլ կոկոնները այդ
երիտասարդ թոյն վազող կրծքէն խորշա-
կահար կ'ընկնին ոտից կոխան, ոտքին շրառ-
շախ սխարիկն կը կրէ և սև ու երկար դու-
պաները յաճախ կը ցուցադրէ տափաթի
ստորին եզերքներու գարձիկովմը, որուն վը-
րայ այնչափ խնամք կը տանի որչափ աղջիկ
մը իր մազերուն. կտորած ապակիի կտոր մը
չունի գուցէ իր տան մէջ, բայց փողկապի
կապուածքին և իր վարսայարդարութեան
մէջ այնչափ վարժ ձեռքեր ունի, որ մու-
թին մէջ իսկ զանոնք կը յարգարէ այն-
պէս իբր թէ նոր ելած է վարպետ ֆուլա-
մեռնի խանութէն : Կը ճաշէ, գիտէ՞ք ուր.
ամենափայլուն հրապարակին վրայ, Օփե-
րա Պառը, կամ Մատամ Թօզի գարեջրա-
տունը... Գաֆէ էփրսիէնի, Կրան Պա-
ռի, Սիլանտիտի, Օթէլ Շէպէրթիսի պիւ-
ժէն, կարծես անոնց մէկ անշարժ ապօնէն
ըլլայ. և արդէն ուրիշ տեղ նստելու ինք-
զինք արժանի չի տեսներ, միւրջիֆով հա-
մեմուած գարեջրը կառնէ ու մոյ ու մոյ,
ու մշուշի մէջ թաղուած աչքերը, հոգե-
կան երանաւէտ զգլխումներու մէջ մխր-
ճած, իրեն մոռցնել կուտան թէ ինքը
յարիտիներս յարձակեր է իրեն առջևը եկող
մեղքներուն վրայ զորս կը լափէ սովահար
մարդու արտառոց շարժումներով. այո՛,
կը լափէ, որովհետև փորն անօթութեան
աղաղակներու քառալար աններգաշնակու-
թեամբ անօթութեան երկայնաձիգ երգը
կ'արձագանգէ ամբողջ աղիքներու զօրու-
թեամբ. փորին բողբոջ՝ որ իր ցուցամու-
թեան յագուրդ տալէ աւելի մեծ իրա-
ւունքներով իր գատարկ գլխուն խորհուրդ-
է տուած որ այդ փայլուն հրապարակնե-
րուն վրայ նստած քանի մը գաւաթ գա-
րեջրու առնէ. ո՛վ դեռ մահացու մեղքե-
րուն կարգը չի դասուած և « մեղայ » ով մը
չի քառուած ցուցամութիւն. քանի՞ քա-
նի տան դռներն են փակեր դուռ, ու քա-
նի՞ փորեր ու ստամոքսներ աւերակ են ըրեր :
Կտորած գծերի այս քանի մը հառ-
ւածները արտաքինին տալէ վերջ, անցնինք
մեր այս գասակարգի երիտասարդութեան
համառօտ ներքինին :
Ներդաշնակ ու արտաքինին զուտ հա-
մապատասխան ներքին մ'ունին այդ երի-
տասարդները, խառնէ՛ մի քիչ անոնց ու-
ղեղը, գլուխը, ուր բարձրանալու համար
ոչ Գողթաթին հասակն ունենալու կարիքը
կայ և ոչ ալ Յակոբ Նահապետին տեսիլ-
քի մէջ երեցող ու մինչև երկինք համող
սանդուխին պէտքը. անոնց գլուխը բարձ-
րանալու հարկ ալ չկայ. ընդհակառակը

կոխած գետինէդ մէկ, կամ քանի մը աս-
տիճանի վայր էջք մ'ունեցիր, ու կը հաս-
նիս անոնց սեղեղային մակարդակին յատա-
կը. այդ խառնաշփոթութեան քասիին ու
անհամբաշխ սարերու տարտարօսին մէջ
պիտի գտնես գուցէ բոլոր այն շիփթ տար-
բերը որոնց մէջ կը գտնուէր աշխարհ « Ե-
ղիցի շոյս » ի հրամանը լսելու նախընթաց
օրը, եթէ մարդ աստուածային կարողու-
թեամբ օժտուած լինէր, այդ գլխի խառ-
նափոխութեան մէջ ոչ միայն արև կամ
լուսին մը չէր կարող վառել, այլ լուց-
կի մ'անգամ չէր կարող բռնկեցնել հոն.
ահա այդչափ անընդունակ են այդ ուղեղ-
ները, ուր քանի մը դեռ չկարգացուած,
կամ թերամարս գրքերու անունը գրոշմը-
ւած է, քանի մը գուցէ ընկերվարական
կամ ըսենք յեղափոխական գծերու տար-
տամութեան նետուած են, ասոնց ա-
նոնց խորութիւնը չափելու ընդունակ եղող
հիմքերու. վարժարանական սեղաններուն
վրայ հապիւ արտասանելի քանի մը նախա-
գատութիւններ գրուած են իրենց շատա-
խօս շրթունքներուն, ու, յաւակնոտներ,
ելած են վարդապետելու. ահա՛ իրենց մտ-
քի ամբողջ սերմնայինն :
Անցնինք անոնց շիղբերուն. փափուկ
են, գիւրադրիւ, մէկ խօսքով սնդիկի
պէս զգայուն են երբեմն իրենց շիղբը,
Չղային հիւանդութեանց մասնագետներուն
ուշադրութիւնը կը հրաւիրենք անոնց վրայ.
անոնք թէլէֆօնի, կամ ելեքտրական թե-
լերուն կը նմանին, անմիջապէս ազդուող,
առնորոյ. բայց յոճախ ալ այնպէս խու-
կն այդ շիղբը, որոնց դէմ ատրճանակ
արձակէ, ու եթէ կուզես կուզի թեղա-
նօթ ուղղէ. անոնք իրենց վրայ չեն առ-
ներ, որովհետև մորթեցնին ոնգեղջիւրի
կաշիէն աւելի հաստ է. քու ուղեղ ու բար-
եացակամ մէկ զիտողութեանդ համար քեզ
հետ պիտի խուզվին տարիներով կամ պիտի
ըսեն քեզ. « Կօշիկէդ վեր մի՛ բարձրանար » :
Այդ երիտասարդներէն շատերը մենք կը
ճանաչենք. ասոնք ոչ միայն մինչև այդ
կօշիկը բարձրանալու արժանիքը չունին,
այլ կօշիկէն ալ շատ վար են և նոյն իսկ
չատերու ոտքի մատերուն մօտիկը տեղ մը
գրաւելու իսկ իրաւունքը չունին, բայց
տեղ գրաւելու ամեն ճիգ կը թափեն, ու
սողալով և շիտալայիլ քծնութեամբ կը բարձ-
րանան հոն, ուր սրբութիւնները կը տար-
բալուծուին և հրեշտակութիւնը հրէշու-
թեան ձեռք կ'երկարէ. այդպիսիներուն
համար ընկերականութիւնը դեռ պատիժ մը
չունի սահմանած. դեռ անոնք են յաջո-

զորք, դեռ անոնք են մարդկութեան մէջ
լաւագոյն զիրքեր գրաւողները . իսկ շա-
տեր, գուցէ անմեղներ, կը լքուին ու
կ'ընկնին երեսէ, որովհետեւ չեն շարժու-
թեր և ընդհակառակը պոգանքի խարանով
ատոնց արտոտ ճակատները խարանիլու ալ
չեն քաշուիր հրապարակապէս :

Մեր արդի երիտասարդութեան այդ-
վէրքերը դժբաղդաբար շատ են, վիրա-
բուժ չունինք . գուցէ ատոնց վրայ ի սրտէ
ցաւունք ունենանք, բայց ցաւիլը բաւա-
կան չէ բուժելու համար . պէտք է անխը-
նայ նշգրակով պատուել այդ քանկոնեա
կազմած երիտասարդութեան սրտի ժանգը :

Մենք այդ երիտասարդ դասակարգին
ուղիղ անուն մը չենք գտներ տալու . ա-
տոնք միջոցառելիս այս հրապարակին վրայ
այլասեռութեամբ, հայութենէ քաշուած ու
անկէ պոգացող, բայց միշտ ալ անոր գա-
նաչան հիմնարկութիւններէն իրենց արտոտ
ցուկը չքաշող պատկանէ կը գտնենք, ու-
րոնց կարելի է տալ Հայութեան «կապիւ-
ղին դասակարգ» անունը . զորս կարելի է
գտնել ամեն վայրկեան ու ամեն տեղ . ու-
րոնց գլուխը եթէ վարպետ խոհարարի մը
տանինք ոչխարի մը գլխուն արժէքն իսկ
պիտի չստան, բայց մենք վանոնք մեր գլ-
խաւորներն ընելու կը կոչենք ամենայն
տրամաբովեամբ :

Ա.Վ.Օ

ՏՕՐԹ . Ա . Յ . ԿԵՐԵՍՔԻՆԻՆ

Իր գլխինը Շարա գլուխ-Պէյէ փոխադ-
րած լինելով ի ճահէր, Շարա Պիրքէթ-է-Լ-
Բաթը, ֆրէրներու վարժարանին դիմաց,
կը ծանուցանէ իր արդոյ յաճախողաց ու
յետ այսու իր խնամոց պէտք ունեցողնե-
րը հաճին դիմել վերոյիշեալ տեղն ու կը
գտնուի կէս օրէ առաջ ժամը 9-11 և կէս
օրէ յետոյ 3-5 :

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ANCH' IO SON UOMO

(ԵՄ ԱՆ ՄԱՐԳ ԵՄ) (6)

Գ .

Օ'ն, զա'րկ, մեղս'ւր մարդ մը, որ անկարող է
ինքնինքն պաշտպանելու . պաշտպանել, ինչ
կ'ըսեմ, անկարող նոյն իսկ շարժելու : Տե'ս սա
մտղորեալ ուղիքը, տե'ս սա գողաճար ձեռքերը,
տե'ս սա տոբագանած շուրթները, տե'ս վերջա-
պէս՝ սա կ'իսամեռ մարմինը, և զա'րկ : Դու ա-
ւարտէ՛ ինչ որ արդէն սկսած է : Ահա, զար'կ,
մեղս'ուր, ո'վ քաջ : Մեղս'ուր հիւրդ և անտա-
ռարնակ վայրենիին առջեւ երեսոյ ծածկէ՛, ո'վ
արժանի զուակ քաղաքակիրթ աշխարհի :

Ծիրուսմո՛ իբրև օձ մ'իբ հմայիչին ձայ-
նին՝ անշարժ և գլխիկոր մնաց Մարիէթթայի
տողելու :

Մանկամարդ կինը գորովալի աչքերով պահ
մը զայն դիտելէ ետքը քովը գնաց, ծերունոյն
երեսն ու ալիստան մտրուքը համբուրեց ար-
տասուելով և ըսաւ յուզեալ ձայնով մը :

—Հայր, սիրելի հայր, յոգնած եմ, կ'ա-
ղաչեմ մի քիչ հանգստացիր :

Մերունին՝ կոթնելով Մարիէթթայի վրայ՝
մտաւ ուրիշ սենեակ մը :

Կէս ժամ ետքը Արզար աղա կը խորվար
անկողնոյ մը մէջ, մինչդեռ այր և կին ցած
ձայնով կը խօսակցէին, պարապ օրբանին քով
նստած :

ԲԱՀԱՆԱՅԻՆ

—ՊՕՊ—

(ԱՆՄԵՂ ԿԱՏԱԿ)

Ուտուժով ի բնէ տնանկը, խիզճով ետքէն
սնանկը :

Սին է գանկը, և հին՝ գրպանքը :

Իր բարոյականի «խարթան» հոգի . —սի-
բոյ նահանգը : Սիրտ — մեղքին սահմանքը :

Գիտէ, օրինակի համար, թէ քանի արշըն
է սքեմին երկանքը, ու քանի ստնդիմ . . . իրիս-
կինին լայնքը :

Չատկի ծնունդի միտքը կ'իջնայ «պարտ-
քերնիս տանք» ը, և կ'ըսէ մէջիտը կը խորհի՛
նշխարքով կ'ըսած ատեն պատանքը :

Իրեն համար կա՞յ աւելի անուշ ձայն մը՝
քան դրամին արձագանքը, ու «քէմէրը կապիլ»
էն ետքն է որ կը սիրէ անցունել արձակ կեան-
քը :

Ինչ քննէ աւելի կը ճանչնայ ուտելիքին,
հագնելիքին թանկը . աման կը գնէ սպրանքը,
բայց եթէ խաբուի՝ չի խնայեր խոսքերուն ճակ-
կը :

Օրուան մէջ երկու մտեւ : (Ժամկոչին) —
քաջէ՛ ձօ ջանկը . եւ, դիտէ՛, «մեղս'ուր» կե-
րե » կը կ'ընէ երգածին վանկը .

Վրան փնտռէ սուտերուն հանքը, սըռք
թափած լուտանքը, նըռք ջարդած գովանքը .
մանաւանդ ջղին կը գպչի՝ թէ որ աղքատ մը
բնակի տանը քովտանքը :

Լաւ սերտած է էրիկ կնկան կազերու հան-
գամանքը, —չ'ըսի՛ խորամանկը — : Երբոր տես-
նայ խնդրոյն մութ մէկ երանգը, «ընե՛մ մի .
. . չ'ընե՛մ մի . . . » զինքը կ'առնէ վարանքը :

Բայց դուն փարա՛ ըսէ անոր, ոտքը կ'առ-
նէ խժամանքը, և աչքը՝ վտանգը :

Երբոր տակէն ելլայ փորձանքը՝ ու լսուի
իր յանցանքը, էն առաջ չ'ըլլար անտիղուանքը .
ետքէն կը ցցուի աչքին վանքը . հապա՛ փիլոնի
զրկանքը . . . Կամ անանկը կամ ասանկը :

Ամեն օր նայիլ ծոցին ցանկը, պաշտօնակ-
ցին ծուխը ձգել ճանկը . ա՛ս է իտէալ իր ջան-
քը, — ԱՍՏՈՒՄՈՅ ԺԱՆԳԻԸ :

Թէ՛Ո՛րիկ

(Բիւզանդիոն)

Գ .

Հետեւեալ առաւօտ եթէ աշխարհիս վրայ
զարմանքէն քարացած մարդ մը կար, ձիւրու-
մօն էր :

Երբ Մարիէթթա կը ջանար իրեն յիշեցը-
նել գիշերուան եղելութիւնները, ծերունին կը
ապչէր իր վրէժիտըրական արամադրութեանց
վրայ :

—Այս տարիքիս մէջ ոճրագործութիւնս,
կ'ըսէր և կը կրկնէր խիզճը՝ գլխուն զարմելով .
և այն ալ իմ տա՛նս մէջ, առանց որ և է ըն-
դունելի պատճառի : Սա անիծեալ գիշին է որ
իմ բանակաւորութիւնս գողնալով, զիս գիշակեր
զազաններուն կը հաւատարեցնէ : Կ'երգում, սի-
րելի Մարիէթթա, որ այսուհետեւ այդ թոյնէն
կաթիլ մ'անդամ բերանս չ'պիտի մանէ :

—Արդէն տարիներէ ի վեր քեզի որքան ա-
ղաչած եմ, ատոր համար, հայր : Բայց մարդ
մինչեւ որ մեծապէս չ'մատուի, չ'ձգեր աղիտա-
բեր սովորութիւն մը :

—Իրաւունք ունիս դժբաղդաբար, աղիկս,
բայց ալ լմացաւ ինձի համար, Հիմայ ինչ պի-
տի ընենք այս մարդը, որ շարունակ կը խոր-
գայ : Ներկէ, լաւ . բայց թշնամի մը տանս մէջ
պահել, այդ ո՛չ :

—Հայր, ըսաւ ծիւղէքրէ : այս մտին ու-
րոշում մը տալէ առաջ, աւելի լաւ չ'ըլլա՞ր ըս-
պաւել որ արթննայ, և մեղի հասկցնէ կամ չը
հասկցնէ — զա իր գիտնալու բանն է — թէ ինչ
ծառայութիւն կրնանք մատուցանել իրեն :

—Ծիւղէքրէ, գոհունակութեամբ կը տես-
նեմ որ բաւական օգտուած ես Մարիէթթայի
հետ կենակցութենէդ, Ահա մարդն ալ կ'արթն-
նայ :

ԳՈՂՅԸ

—ՊՕՊ—

Ամեն մարդ ալ կ'ուզէ սիրուիլ, բայց սիր-
ուելու ջանք (ոչ թէ շողոզարթութիւն . . .) չ'ընէր .
Առաքինութեան հատուցում խնդրել, զայն
պղծել է :

Ամենէն վտա կարծուած մարդն իսկ ունի
իր առաւելութիւնները :

Խոսքի մը վերջը, փորձանքի մը առաջին
սա :

Ուր որ կայ ասանկիկն աղջիկ, հոն եր-
բէք ախ չիք :

Թէպէտ կրնաս գտնել միամիտ, համամիտ
(կէտի մը) կամ մտերիմ, բայց երբէք չ'ես կա-
րող գտնել իսկական զաղափարակից :

Բարկութիւնը՝ թէ չ'ըլլայ իսկ զիտս գան-
ձիդ կամ ձեռնարկիդ, գոնէ պիտի ըլլայ անձիդ .
Մէկու մը հետ բարեկամութիւնս, զաղափա-
րի գոհողութիւնով միայն կը հաստատուի :

Որքան քաղցր է դառն վշտերու մէջ թա-
ւալիլ, կարծես երեքարկանութիւն մը կայ հոն
որմէ մարդ չ'ուզեր բաժնուիլ :

Ամեն բան հեռուէն փոքր . իսկ մօտէն մեծ
կ'երևայ :

Քաղաքակրթութիւն ունիլը՝ քաղաքա-
կիրթ ըլլալ է՛, այլ զայն ի դործ դնելը քաղա-
քակրթութիւն է :

Մարդ խարելը շատ դիւրին է, իսկ հաւ-
տացնելը՝ դժուար :

Մարդ մը ծաղրել՝ Աստուծոյ գործը ծաղ-
րել է և արտերու վտարագոյնն է :

Աստուծոյ նոր մի խնդրեր, այլ ունեցածդ
վայելէ :

Շունը կրնայ կրթուիլ, բայց խածնելը չը
մոռնար :

Բնութեան քննիչները՝ զԱստուծոյ փառա-
բանողներ են և անոնց աշխատութեան արդիւն-
քը, Աստուծոյ ինքնութեան ապացոյցներ :

Բարկութեան ատեն գործել, ալիկոծու-
թեան ատեն նաւարկել է :

Ուրախանալ՝ Աստուծոյ գոհանալ կը նշա-
նակէ :

Նորութիւն մը առանց անկանոնութեան
և չափազանցութեան չը կանոնաւորիք :

Խելօք ձիուն նստող շատ կ'ըլլայ :

Խոհեմութիւնս, — ահա բոտ մը, որ իր բա-
ցակայութեամբ, կամ հաղուադիպութեամբ,

Արդարեւ Արզար աղան աչքերը բացաւ,
չորս կողմը դիտեց ապշութեամբ և յանկարծ
սկսաւ հեծկլալ :

—Ո՛հ, ներէ՛, ներէ՛, ձիւրումօ, կ'աղերսէր
արտասուացը մէջէն, թոյլ տուր որ ապրիմ .
կին ունիմ, գաւակներ ունիմ : Ներէ՛, ձիւրու-
մօ, ներէ՛ :

—Ինչ կը տրտայ այս մարդը, կ'ըսէր Ի-
տալացին :

—Գիշերուան սպանալիքներուց հետեւան-
քըն է, պատասխանեց Մարիէթթա :

Եւ երեքն ալ սկսան փախտակալը ապա-
պահովցնելու որ իրենցմէ վախնալու պատճառ
մը չ'ունէր :

Այն ատեն իշխանցուն հանդարտած՝ պատ-
մեց առաջի իրիկուան դէպքերը — բնականա-
բար զանց ընելով պաշտօնարաշխութեան հան-
գիսաւոր տեսարանը — և թէ ինչպէս՝ ժամերով
ան ու գողի մէջ մնալէն ետքը՝ իրենց գուռը
զարկած էր, առանց գիտնալու թէ որո՞ւ տունն
էր : Ա՛հ, եթէ գիտնար, սերիչ սեղ կը դիմէր :

—Լա՛ւ, պատասխանեց ձիւրումօ զայրա-
ցած, հիմայ որ գիտես, կրթաւ բարով :

—Ա՛յս ժամունս, ցո՛րեկ ատենս, բայց ան-
միջապէս կը ձերբակալուիմ :

—Մեղի ինչ հոգ : Կատավարութեան հետ
գործ ունենալ չ'ենք ուղեր :

—Ա՛յնիւ ձիւրումօ, կատավարութիւնը չը
գիտեր որ ես հոս եմ :

—Կը լսէ :

—Գոնէ թոյլ տուր որ սա անկիւնը կծկը-
տիմ մնամ մինչեւ գիշեր, պաղատեց Արզար ա-
ղան :

(Շարունակելի) Ա . ՊԱՆԵԱՆ

ծայրագոյն թշուառութեան մէջ կը թողու զաշխարհ :

Մարդկային կոչումը՝ բարձր էր՝ բայց նա այդ կոչումը իր վրայ կրելու արժանի ծառայութիւնը չը մատուցանելէ վերջ, անբարչատութիւն մ'ալ գործեց :

S. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

(Շարունակելի)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

«Արշալոյս» ի Տպարանէն ճաշակաւոր սպազրութեամբ լոյս տեսաւ, Նորին Ս. Օծուծիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս Վեհափառ Հայրիկի երկատիրութիւնն «Վերջալոյսի Ձայներ», որոյ մասին արդէն խօսած էինք սակէ առաջ :

ՆԱՍՏԿ ԳԱՀԻՐԷԷՆ

ՄԵՌԱՒ ԱՐԴԵՕԲ

Խուլ արձագանգը լուսթեան մէջ անդրադարձաւ եղիպտոսացութեան սրտէն. «մեռաւ արդեօք» : 30 երկար տարիներ զատկանելի հնութեամբն է որ ալ թերեւս յախտեան մեռնելու նշաններ ցոյց տալ կ'սկսէր Գահիրէի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը . . . :

Ներկային մէջ՝ անոր գոյութեան միակ ապացոյցը եղաքէքէք Գաֆէ Արմէնիէնէն էր . այդ շէնքին առջեւ էր, ուր քանիցս հանդիպեցայ շատ մը անգործ պանդուխտ հայերու որոնք օրական մէկ երկու անգամ իբր նուիրական պարտք կարծես ուխտաւճարի մը առջեւ ձեռքերն կուրծքնուն ծալլած, խոր հոգեկան տխրութիւն մը ունեցած կ'երեւէին, երբ իրենց աչքին առջեւ սղալի կիրառով աւերակ դարձած կը գանէին մի ժամանակուան իրենց միջիջրութեան վայրը, ուր կուգային կը համախմբուէին օրասարսիկի ծանր հոգեւոր մեղմացնելու. — Եթէ կարելի էր — :

Սյն տեղ էր ուր շատ մը պանդուխտներ իրենց թախմանքի բողոքները կ'անցնէին առանց նշանակելի վճարումի մը, մին թղթախաղով, միւսը նարտով, ուրիշ մ'ալ լրագրի մը բանաստեղծական սիրուն կտոր մը գոց ընելու ջանալով . . . :

Շէնքի անսւնը զաֆէ, որքան որ ամբողջական անյարմարութիւնով մը կը միանար իր իսկ նպատակին, բայց անվիճելի ստոյգ ու արգարախո՛ծ ճշմարտութիւն մը խոստովանած պիտի ըլլանք ըսելով որ այդ շէնքը միակ կեդրոնավայրը եղած էր Հնդկաստանի խորերէն, Ասիոյ բարձունքներէն եկող բոլոր հայերը միմեանց ծանօթացնելու եւ մերթ զանոսք օղակելու եւ շղթայելու եղբայրական, բարեկամական, ու ընկերական սերտ կապերով . . . :

Տեղացի արարը, երապոցին, թղթատան եւ հեռագրատան պաշտօնէութիւնը, ո՛ր եւ է հայու հասցէն գտնելու համար հոն կը դիմէր. եւ կը յաջողէր գտնել :

Գաֆէ Արմենիէնը ութսուն տո հարիւրի կենդանի սպառնացներէն մին էր Հայոց յեղիպտոս ներկայութիւնը հաստատող՝ որովհետեւ Օսմ. Պանրի, Գրեմի Լէօնի պանքոթիւնը, մասնաբաժնեքը՝ ուղղուած ո եւ է հայու անուան, շատ անգամ անվճարելի եղած են մինչեւ որ ներկայացուած չ'է ընկերութեան կնիքը. հետեւապէս բաւականին մտածելու առիթ ունինք, մասնաւոր կերպ անոր գոյութեան վերայ մոխիր ցանուկուլն հանդիսատես կը լինի Եգիպտոսի հայութիւնը :

Սակայն կ'ըսեն թէ չ'է մեռած եւ ըզձալի է բնաւ չ'մեռնիլը. եւ արդեօք այդ ընկերութեան հիմնարկուները չի՞ պիտի մեղադրեն արդի Տնօրէն խորհուրդն, որ իւր գանգաղօտութիւնը դեռ կը շարունակէ. արդէն չը՞ բաւեր երկու ամսուան մօտ տատամտում մը երբ սա վերջնականօրէն պիտի գահավիժի մտացութեան ծոցը :

Պատճառ մը չ'կայ որ արդեօք ինչի յարգանքով երարեքուելու այդ ստուակ հիմնարկութեան մը հանդէպ, որու շնորհիւ տարեկան 2-3 ազրաթիկ ազայք կը թափին, ինչպէս նաեւ քանի մը նոյն գասակարգէ ընտանիքներ պատու մը հաց կ'ստանային :

Ընկերութեան նպատակները, որքան որ ըստացուածէն եւ իր անուան արժանիքէն շատ նըուազ բան մ'էր, — քսան եւ հինգ տո հարիւր — բայց վերջապէս օգնութիւն մ'էր եւ այդ ճշմարտութիւնը անժխտելի է :

Արդեօք անդիտակցութեան օրօրը կարգանք անոր յախտեան խոր քնին, թէ՛ կանգ առնենք բոլոր այդ ստուակ նուիրագործուած հիմնարկութեանց հանդէպ, խոր վշտով գլուխ խոնարհեցնելով անոնց բարի, առաքինի, ու օգտաշատ անցելոյն. թէ սրտի խորին յուզումով ներկայ լինինք անոր յուղարկաւորութեան թափօրին, որոյ դերեզմանին վրայ դիտակից մաքր, որքան ու այրիներ պիտի սգան . . . :

ԿԱՐԱՊԵՏ ԹԱԳԻՈՐԵԱՆ

ՈՐԲԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ընկերութեանս Գործ. Ժողովը սոյն սղգարարութեամբ կուգայ ստիպողաբար խնդրել Գահիրէի և շրջակայից այն Պատ. սղգայիններէն որոնց ընկերութեանս կողմէ զրկուած են «Լուսինեանք» գրքակներէն, ինչպէս նաև Գեր. Ս. Առաջնորդի լուսանկարներ, որ հաճին անոնց փոխարժէքը և կամ՝ հակառակ պարագային՝ յիշեալ գիրք կամ լուսանկարը անյայտաղ վերադարձնել մեզ, Ընկերութեանս գանձապետի հետեւեալ հասցէով :

GARABED ERZENGATZIAN
Rue Abdul-Aziz
Caire

Ինչպէս արդէն ծանուցուած է, «Լուսինեանք» ի հատոյթէն գոյացած գումարը զրկուած է ու նոր գանձուածները նոյնպէս պիտի զրկուի Արարիկի ընդհանուր որբերուն, որոնց եղկելի կացութիւնը անծանօթ բան մ'ըլլալու չ'է ամեն զգայուն սղգայիններու :

Գործ. Վարչութիւն
Վ. Ատենադարի Ատենապետ
Ս. ՕՏԱՊԱՇԵԱՆ Ա. Մ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ԻՐԱԽԱՐԱՆ ՄԸ . — Ժամանակը որ անդալի կերպով կը սահի, շատ մօտաւոր ապագայի մը մէջ Եգիպտոսացութիւնը պիտի օժտէ ձեռնհաս և ուղղամիտ հայ փաստարանով մը . ահա այս է որ անհուն ու ըրախութիւն կը պատճառէ մեզ, երբ կը անդեկանանք թէ՛ քաղաքիս իրաւարանական վարժարանի ուսանող Տիար Յարութիւն Շամլըեան առաջիկայ Յուլիս 5 ի Մէսսօթրիով Փարիզ կ'ուղևորի, անցնելու համար իր երկրորդ տարուան պախաշորեակ ընտելութիւնները տեղւոյն Քախաշորէն առաջ :

Տ. Յարութիւն Շամլըեան չափազանց աշխատասէր և նոյնքան ալ պարկեշտ և ըրտասարգ մ'է. այնպէս որ իր յովտորութիւնները լսելու համար մաղթանքներ ընելու հարկը անհրաժեշտ չենք սեպել :

ՄԻՋԱԳԷՊ Մ'ԱԼ . — Զարդացած և բանիբուն հայր մը՝ Գալստեան վարժարանի հարցաքննութեանց ներկայ լինելով՝ նշմարած է շատ մը թերութիւններ և յետագիմուծիւն . այնպէս որ համարձակած է

ուղղակի դիտարկութիւններ ընել Տեսուչ Տ. Սյապինն յոհանային :

Այսպիսի ազնուկ վարժարանին շուրջը երբ կը պաշտօնէ, անկարևոր նկատելու չէ և պէտք է լուրջ կերպով հետաքրքրուիլ այս հարցով, վարժարանական համաճարակին վերջնական գարման մը գտնելու համար :

ԺԱՆՏԱԽՏ . — Վերջին 24 ժամուան մէջ երկու նոր ժանտախտի դէպքեր պատահած են Զակապիկի մէջ :

Ուրիշ տեղերու մէջ ո՛ր է դէպք պատահած չէ :

— ՊԱՏՈՒԱՆՇԱՆ . — Հանրային Պարտուց Վարչութեան հաստատման 25 ամեակին առթիւ Ն. Բ. Խալիլը երկրորդ կարգի մէճիփիլի պատուանշան շնորհած է Ն. Վ. Մօկ փաշայի, Գարրիէլ պէյ Խալիլի և Պ. Գարբարայի :

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

Թ ՈՒՐ ԲԻ Ա

Սուլթանը Փրանսական դեսպանին խօստուած տուած է ֆրանսական գործարաններուն երկու պատերազմական նաւեր յանձնարարել :

Սուլթանը իր այս խօստուածով ֆրանսային ալ տուած է այն առաւելութիւնները, զորս կը վայելէին Խալիլա, Գերմանիա, Անգլիա և Միացալ Նահանգները :

— Թուրք կառավարութիւնը տեղեկանալով որ ամերիկացի միսիօնարներ անուղղակի ճամբաներով հող մը գնած և անոր վրայ դպրոց մը կառուցած են, բոլոր ստորագաս իշխանութեանց հրամայած է խուսիւ գործադրել այն օրէնքը, որ բոլոր օտարահպատակներուն կ'արգիլէ եկեղեցիի կամ դպրոցի շինութեան ձեռնարկել, մինչև որ կառավարութեան արտօնութիւն տրուած չ'ըլլայ :

— Նորին Ս. Օծուծիւն ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը անցեալ ամսոյ 13 ին հինգ վարդապետներ եպիսկոպոս ձեռնադրած է, որոց մասին էլ միածնի Սինոդը դեռ իր կարծիքը չէ ներկայացուցած եղեր, ինչ որ պահանջել և ստանալ անհրաժեշտ է եղեր :

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՐՃԱՐԱՆ

«ԿՌԱՆ ՔԱՅԷ ՇԻՇԱ»

Եղպէքիյէ, Սրբնախա պատի գէմ, Տիար Գրանիկ Սիրունեանի սեփականութիւնը եղող սոյն հատատութիւնը որ Գահիրէի ամենէն գեղատեսիլ եւ ամենէն օգտուելի դերքը կը գրաւէ, ոչ միայն միջազգային այլ նոյն իսկ հայկական ժամադրաւայր մը հանդիսացած է :

Սպասարկութեան մասին ցոյց տրուած փոյթըն, ըմպիկաց մարքութեան համար տարուած խնամքն ու գինիբու չափաւորութիւնը ուրիշ ոչ մէկ տեղ կարելի է տեսնել : Հոն՝ ամեն ճաշակ իր գոհացումը կրնայ գտնել :

Օտար լեզուաւ լրագրաց հետ կը գտնուին հայերէն ամեն թերթեր :

ԿՌԱՆ ՔԱՅԷ ՇԻՇԱ, հասցէով կեղծ նամակներն եւ ուսանողներն անմիջապէս կը յանձնուին իրենց տէրերուն :

ԿՌԱՆ ՔԱՅԷ ՇԻՇԱ

Եղպէքիյէ, Սրբնախա պատի գէմ

ԳՐԱԾԱՐԻ ՊԵՏՐԸ ԿԱՅ

Ան՝ր են մեր գործ փնտռող և չ'կայ ըտողները :

Նրկու վարժ գրաչարի պէտքը կայ . մէկը « Արշալոյս » ի , և միւսը Հրատարակչական Ընկերութեան » համար . ամսական 80-120 ֆր . զիմեւ « Արշալոյս » ի Խմբագրատունը :

Ուսանող գրաչարներ ալ կ'ընդունուին :

ԱԶԴ

ԱՐՇԱԼՈՅՍԻ Տպարանէն ըլլա տեսած է ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԳԻՐՔԸ որը տարիներէ ի վեր սպառած էր :

Այս ութ ու կէս երկօրեանակ մեծագիր Փորձայով գիրքը Գահիրէի Հայոց Հրատարակչական Ընկերութեան երախայրիքն է : Գինն է երեք ՅՐԱՆՔ :

ՊՈՒՒՏՈՆ ԼՈՒՍՆԵԱՆ

ՆՈՐ ԲԱՌԱԳԻՐԻ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ՊԱՐԱՆՍԱԶԱՅ ՓԱՐԻՉ 1901

Սոյն ընդարձակ Բառգիրքը , որուն Առաջին Հատարը 1061 մեծագիր երեսներէ բաղկացած և բազմաթիւ պատկերներով զարդարուած հրատարակ ելած է և կը պարունակէ A-H գիրերը , կը վաճառուի ի Գահիրէ . գիմեւ ի Պէյն-էլ-Սուրէն Հայոց Եկեղեցին ,

Օր . ԲԻՒՍՏԻՆԷ ԳԱԶԱԶԵԱՆԻ

ՄՐԱՌ ԼԱՅՔ

ԼՈՆՏՈՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնեալ 1843

Բացարձակ ապահովութիւն . — Չափաւոր ապահովագին . — Ապահովագրի հնութեան համաձայն շահու առաւելութիւն . — Իրաւանց պահպանութիւն՝ ապահովագրի վրձարմանց յապաղումի պահուն . — Չափող պարագաներու մէջ անմիջական հաշուեյարդարութիւն . — Շահու բաժանում ամեն Հին՝ 8ԱՐԻՆ մէկ անգամ :

Ս . ԼԻՕՆԱՐ

Ընդհանուր ներկայացուցիչ Եգիպտոսի

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 23 ՅՈՒՆԻՍ 1901

4503	2265	3545	4104	853	737
1152	1333	1377	1463	1492	4573
4707	5023	5199	5346	5672	5748
6655	6850	7623	8615	8667	9493
		5523	9207	9690	

ՀՐԷԻՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԿԻՐԱԿԻ 23 ՅՈՒՆԻՍ 1901

254	8310	5712	1764	86	211
265	730	911	1082	1713	1913
2123	2273	3436	3743	3818	4134
4969	5182	5307	6277	6454	7051
7525	7563	7643	7653	9410	9940

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե . ԹՈՐՈՍԵԱՆԻ

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ԽՐԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալաքի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն , Պրիսթալ Օթէլի ճիշդ գիմայ , Գաֆէ Տր Լա Պուրսի կից :

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լուսագոյն կարի մեքենաները Սինկլիթ ներն են ևւ ասոնցով մինչև ցարդ 17, 000, 000 ծախուած է :

400 է աւելի վիսյակակներով ևւ մեայլներով վարձատրուած , երախատուայ մեքենաներ ,

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանգիսիէ մէջ ստացած է :

ՀԱԳԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ


ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԴՂԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ԱՐԲՈՒՆԻՔԻՆ

ԵՒ ԹԱԳՍԻՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՅ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԵՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ , ուշագրութիւն գարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Սինկլիթ ի յաճկանչիմ :



Ձրի դասեր և նորոգութիւններ , Սինկլիթ մեքենայից համար , յաճախողաց տուներուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւն հին մեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

Գին ՉԱՓԱՒՈՐ

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐԱԻՍՏԸ ԵՒ ԿԱՐԵԻՈՐԸ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները : Ապահովագրեալներուն արգէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ արևէ ընկերութեան մէկ միլիար աւելի է :

ԳԷՈՐԳ ԵԿԱՒՕՑ ներկա . յաջուցիչ ի Գահիրէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշը և է ընկերութեան աւելի երախատուութիւններ , ընդարձակ գործառնութիւններ և հրատարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագին կը գաւձէ :

ԱԼԷԲՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործախառար յԱղեքսանգրիա :

ԿՕՇԿԱԿԱՐ

Գ . ԵՒ Յ . ՊԵՏՐԻՆԵԱՆ ԵՂԲԱՐԻՔ

Պագար-Մուրուր թիւ 39

Կ'ուղէ՛ք ունենալ հմուտ վարպետի ձեռքէ ելած , ֆրանսական նորաձևութեանց համապատասխանող , ոտքերը կոշտերու ցաւերէն ազատ պահող և զիմացկուն կօշիկներ :

Դիմեցէ՛ք ի Պաղար-Մուրուր թիւ 39 խանութին մէջ հաստատուած Պէշիբեան եղբարց , որոնց գործածած ապրանքներու տուկունութիւնն և ձևերու մասին ունեցած հոգածութիւնը ամեն տարակոյսէ վեր է :

Պէշիբեան եղբարք իրենց յաճախողաց ըրած յանձնարարութիւնները փութով և մեծ խնամով կը պատրաստեն :

Բաւ է միայն մէկ անգամ գիմել իրենց . ապահովագէս մնայուն յաճախող պիտի լինիք :

ԲԱՐԻՈՒՑԻ ԸՆՏԻՐ ԱԾՈՒԻ

Ունէին՝ք մինչև ցարդ հայ մը որ գիտնար մտածել թէ՛ ամուսին ալ մեծաքանակ սպառում կ'ունենայ ևւ կրնայ կարեւոր շահ արտադրել : Առուսուրի այդ սուպարէզն ալ օտարներուն թողուած էր :

Տիար Թալուր Վարդանեան (Սանտսանի քեռորդի) այժմ ամենաընտիր ամուսին վաճառականութեամբ կ'ըրողի ևւ մրցում բացած է օտարներուն դէմ :

Դիմեցէ՛ք իր մթերանոցը Սուգ-Պուլար թիւ 17 ևւ 18 :

Անխարդախ կշիռ ևւ չափաւոր գին :

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ — ՍԻՄՈՆ ՅԵԼԷԿԱՆԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ

Գին 10 Դահեկան ողջ :